ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑ - 200

# ԵՐԵՎԱՆԸ ՆՇԵՑ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԴՊՐՈՒԹՅԱՆ ԱԴԱՄԱՆԴԻ ՀՈԲԵԼՅԱՆԸ

*Հոկտեմբերի 17-18-ին Երեւանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի եւ Թբիլիսիի Կովկասյան համալսարանի նախաձեռնությամբ, անցկացվեց «Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը եւ նրա դերը Կովկասի կրթական կյանքում» խորագրով միջազգային երկօրյա գիտաժողով՝ նվիրված Կովկասյան դպրության ադամանդի հիմնադրման 200-ամյակին:*



Միջոցառմանը ներկա էին եւ ելույթներ ունեցան Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) ռեկտոր Սրբուհի Գեւորգյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, Հայաստանում Վրաստանի դեսպանորդ Գիորգի Չխեիձեն, ՀՊՄՀ Պատմության եւ հասարակագիտության ֆակուլտետի դեկան Էդգար Հովհաննիսյանը եւ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սամվել Պողոսյանը, Թբիլիսիի Կովկասյան համալսարանի պրոֆեսոր, պատմական գիտությունների թեկնածու Գուրանդա Ճելիձեն, թբիլիսահայ գործարար, հասարակական գործիչ Լեւոն Չիդիլյանը, որին այդ օրը ՀՊՄՀ-ի Գիտական խորհրդի որոշմամբ, շնորհվեց այդ բուհի «Պատվավոր դոկտորի» կոչում:

Ելույթ ունեցողներն առանձնակի կարեւորեցին Ներսիսյան հոգեւոր դպրոցի 200-ամյակի առիթով կազմակերպված տարատեսակ միջոցառումներն ու այդ համատեքստում ընդգծեցին գիտաժողովի կարեւորությունը՝ համալսարաններում գիտական, հետազոտական բաղադրիչն ակտիվացնելու տեսանկյունից:



Նրանք նշեցին, որ «Ներսիսյան դպրոցը եղել է մեր մանկավարժության, կրթության մեթոդների կիրառման առաջադիմական մտքի կարեւոր հաստատություն. Հովհաննես Թումանյան, Ղազարոս Աղայան, Պերճ Պռոշյան...»:

Համալսարանի ռեկտոր Սրբուհի Գեւորգյանը հիշեցրեց, որ իր մեկդարյա պատմության ընթացքում կրթական կառույցն ունեցել է 2000-ից ավելի շրջանավարտ, բարձրաժեք մտավորականների սերունդ: «Գործելով Վրաստանում, կրթական հաստատությունն իրավամբ մեծ նպաստ է ունեցել հայ-վրացական հարաբերությունների գործում, ինչի զարգացումը, լավագույն ավանդույթների շարունակականության մասին է վկայում նաեւ այս գիտաժողովը: Լիահույս եմ, որ Ներսիսյան դպրոցի լավագույն ավանդույթները կշարունակվեն»:

Վրաստանում Հայաստանի դեսպան Աշոտ Սմբատյանն իր խոսքում ընդգծեց՝ Թիֆլիսի Ներսիսյան հոգեւոր ճեմարանի 200-ամյա պատմությունն իրավամբ հանդիսանում է հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամության պատմության նշանակալից դրվագներից մեկը: Հայ ժողովրդի մեծանուն գործիչները, ավարտելով Ներսիսյան դպրոցը, ապրելով ու գործունեություն ծավալելով Վրաստանում, անջնջելի հետքն են թողել ոչ միայն հայ, այլեւ վրաց ժողովրդի պատմության մեջ՝ դառնալով երկու ժողովուրդների պարծանքը:

Նշենք, որ Ներսիսյան հոգեւոր ճեմարանը 1912-1924 թվականներին գործում էր թբիլիսյան բարերար Ալեքսանդր Մանթաշյանի ֆինանսավորմամբ կառուցված շենքում: 1924 թվականից մինչեւ անցյալ դարի 90-ական թվականները, շենքում գործել են մի շարք գիտահետազոտական կառույցներ, իսկ 1995 թվականից այդտեղ բացվեց Թբիլիսիի Կովկասյան մասնավոր համալսարանը:

Հիշեցնենք, որ Ներսիսյան հոգեւոր դպրոցի հիմնադրման 200-ամյակին նվիրված միջոցառումները մեկնարկել էին դեռեւս տարեսկզբին:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՀՈԳԵՎՈՐ

# ԹԲԻԼԻՍԻՈՒՄ ՆՇՎԵՑ «ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ»-Ը

*Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տոնացույցով, 2024 թվականի հոկտեմբերի 12-ին նշվեց «Սրբոց թարգմանչաց տոն»-ը:*

Վիրահայոց թեմի «Հովհ. Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում կայացած միջոցառման խորհուրդը Սուրբ թարգմանիչ Վարդապետների օրինակով թարգմանչական գործունեության դերի ու նշանակության վերհանումն էր հայ-վրացական գրական կապերի մերձեցման ու խորացման գործում:

Միջոցառմանը ներկա էին հայ եւ վրաց գրականասեր հասարակայնության ներկայացուցիչներ, բանաստեղծներ ու թարգմանիչներ, վրացի գրչակից ընկերներ: Նրանք մեկ րոպե լռությամբ հարգեցին վերջերս կյանքից հեռացած բազմավաստակ բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարի հիշատակը:

Տերունական աղոթքից հետո, «Հովհ. Թումանյանի տուն» կենտրոնի հոգեւոր տեսուչ արժանապատիվ Տեր Կիրակոս քահանա Սիմոնյանը փոխանցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանի օրհնությունն ու բարեմաղթանքները, խոսեց մշակույթի զարգացման, ազգի պահպանության եւ հավատքի խորացման գործում գրերի ստեղծման ու թարգմանական գործի կարեւորության մասին:

Միջոցառումը նվիրված էր հայ եւ վրաց գրականություններից արհեստավարժ թարգմանչուհի Ասյա Դարբինյանի թարգմանությունների եւ Արմեն Օհանյանի «Հակամիմինո» («Անտիմիմինո») ժողովածուի շնորհանդեսին: Թարգմանչուհին մանրամասն խոսեց այն մասին, թե ինչպես երկու քրիստոնյա ազգերի գրական կապերից կատարված թարգմանությունների միջոցով ընթերցողներին ծանոթացնել հայ եւ վրաց գրականությունների զարգացման իրատեսական առաջընթացին, խորացնել հետաքրքրությունն ու հարգանքը միմյանց պատմության, մշակույթի, գրականության նկատմամբ:

Թարգմանական գործության կարեւորությանը անդրադարձան վրացի գրողներ Մանանա Գորգիշվիլին եւ Գելա Սուլաձեն:

Գնահատանքի խոսքով հանդես եկան «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, թեմի մամլո խոսնակ Սուսաննա Խաչատրյանը, իրենց ստեղծագործությունները եւ կատարած թարգմանությունները ներկայացրին բանաստեղծներ Մարինա Կիրակոսյան-Մոսեսովան ու Միքայել Անանովը:

Միջոցառման ավարտին ներկաները ստացան Ասյա Դարբինյանի կողմից վրացերեն թարգմանված տարբեր գրքեր:

*ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ*

ԱՐՁԱԳԱՆՔ՝ ԱԴԱՄՅԱՆՑԻՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀՅՈՒՐԱԽԱՂԵՐԻՆ

# ՍՏՈՒՐՈՒԱ - ԲԱՅԱՆԴՈՒՐՅԱՆ ՌԵԺԻՍՈՐԱԿԱՆ ՏԱՆԴԵՄԻ ԱՆԶՈՒԳԱԿԱՆ «ԽԱՆՈՒՄԱՆ»



*Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում հոկտեմբերի 9-10-ին Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի Երեւանյան հյուրախաղերի արձագանքներից մեկի՝ երեւանցի հայտնի թատերագետ Սամվել Դանիելյանի հոդվածը: Այդ տեսակ բարձրակարգ մշակութային տոն, ինչպիսին Թբիլիսիի հայկական թատրոնի «Խանումա» ներկայացումն է, հնարավոր է ստանալ միայն կատարյալ ու անթերի համագործակցության արդյունքում:*

Երկու օր շարունակ Երեւանում կայացավ թատերական մեծ տոն: Երեւանի Կ.Ստանիսլավսկու անվան պետական ռուսական թատրոնում հյուրախաղերով հանդես էր գալիս Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնը Ա.Ցագարելու՝ դեռեւս 1882 թվականին գրված «Խանումա» հայտնի կատակերգության սքանչելի բեմադրությամբ:

Առաջ անցնելով՝ ասենք, որ տոնը կրկնակի էր, գուցեեւ քառակի էր, քանի որ ամենաներդաշնակ համադրությամբ իրար հետ համագործակցում էին Հայաստանի եւ Վրաստանի կառավարությունները, հայ եւ վրացի բազմամշակութային գործընկերները եւ, իհարկե, ավելի շքեղ երեւույթ դարձավ բեմադրիչ, Թբիլիսիի Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար Ռոբերտ Ստուրուայի եւՊ. Ադամյանի անվան թատրոնի բեմադրող ռեժիսոր եւ գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանի բոլոր ոլորտների համար օրինակելի իրարահարգ ու ներդաշնակ ջերմ համագործակցությունը:

«Խանումա» ներկայացումը դարձավ մշակութային երեւույթ ոչ միայն հայ իրականության համար, այլ այն հստակ տեսանելի գագաթ դարձավ բազմադարյա հայ-վրացական մշակութային հարաբերությունների պատմության մեջ՝ իր նմուշօրինակ տեղը գրավելով աշխարհում հազվադեպ հանդիպող պատմամշակութային սերտ հարաբերություններում:

Եթե նկատի առնենք նաեւ այն հանգամանքը, որ շուտով նախատեսվում է ավարտել իր տեսակի ու լուծման մեջ բացառիկ՝Թբիլիսիի հայկական թատրոնի նոր շենքի հիմնակառուցման աշխատանքները, եւ «Խանումա» ներկայացումն էլ կդառնա նոր հիմնովին վերակառուցված շենքում արժանիորեն խաղացվող առաջին ներկայացումը, ոչ միայն որպես փայլուն ներկայացում, այլ նաեւ որպես հայ-վրացական պետական մշակութային համագործակցության խորհրդանիշ:

Ինչ վերաբերում է զուտ ներկայացմանը, ապա Ստուրուա-Բայանդուրյան ռեժիսորական տեսական-մտավոր տանդեմն իր գործնական փայլուն դրսեւորումը ստացավ հրաշալի եւ պրոֆեսիոնալ մեծ պատրաստվածություն ապահովող արտիստական թատերակազմում, ովքեր մի նոր կյանք ու շունչ են հաղորդել ռեժիսորական ինքնատիպ, ոչ հեշտ, նույնիսկ շատ դժվար պահանջներին: Դասական եւ ժամանակակից թատրոնի համաշխարհային չափանիշներով ամենաբարձր վարկ ունեցող ռեժիսոր Ռոբերտ Ստուրուային հայաստանյան հանդիսատեսը քաջածանոթ է եւ շատ է սիրում նրա անզուգական գործունեությունն իր բոլոր դրսեւորումներով՝ լինի ստեղծագործական, թե քաղաքական, եւ մեծ ուրախությամբ է դիտում «ավագ» ու «կրտսեր» մասնագետների համագործակցության պտուղները «Խանումա» ներկայացման մեջ, որտեղ ռեժիսորական մտքի համադաշնությունը կատարողական բարձր որակի է հասնում ոչ միայն բոլոր արտիստների եւ կատարողական որակներում, այլ իր բարձրակետին է հասնում Հակոբի դերակատար Էդուարդ Մուրադյանի ուղղակի վիրտուոզ արտիստական «ստուրուական» կատարման մեջ, որտեղ զուգակցվում են կերպարի գրոտեսկային արտահայտչականությունը, կերպարային օրգանականությունը, երաժշտականությունը, պարային կրակոտ ու վարակիչ հրաբխայնությունը, որի ամեն մի շարժին ու շարժմանը ծափերով ակտիվորեն մասնակցում է իր տեղում հազիվ նստող հանդիսատեսը:

Իսկական ստուրուական ներկայացում՝ բայանդուրյանական հայկական փայլուն կատարմամբ: Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնի ընդհանուր գործունեությունը՝ Արմեն Բայանդուրյանի ղեկավարությամբ, հրաշալի արտիստական կազմի մասնակցությամբ, հայ եւ վրացի բարձրակարգ գործընկերների համամասնակցությամբ, այնպիսին, ինչպիսին հայ եւ վրացի տաղանդավոր նկարիչներ Մայիս Մխիթարյանի եւ Աննա Սոփրոմաձեի համագործակցությունն է, Նարեկ Բայանդուրյանի երաժշտական ձեւավորումը, պարուսույցներ Նինա Կերվալիշվիլու եւ Շոթա Գեգիաձեի համատեղ աշխատանքը, այս ներկայացումը դարձնում է երկու երկրների մշակութային համագործակցության չափանիշային ու միաժամանակ օրինակ հանդիսացող արժեք ոչ միայն հայ-վրացական, այլեւ հայ-միջազգային բոլոր մշակութային շերտերի համար:



*ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

# 26 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԴՈՒՔ ՉՈՐՍ ՏԱՐԻ ԺԱՄԿԵՏՈՎ ԿԸՆՏՐԵՔ ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

Առաջին անգամ Վրաստանի ընտրությունների պատմության մեջ.

- Ընտրողները խորհրդարանի անդամներին ընտրելու են համամասնական կարգով. դուք ընտրելու եք միայն մեկ քաղաքական կուսակցություն
- Ընտրողների գրեթե 90% քվեարկելու է էլեկտրոնային տեխնոլոգիայի կիրառմամբ
- Այն ընտական տեղամասում, որտեղ էլեկտրոնային սարքեր չեն կիրառվի, ընտրական քվեաթերթիկները կթվայնացվեն

## Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ Է ԺԱՄԸ 08:00-ԻՑ ՄԻՆՉԵՎ 20:00**

ՑԷՍԿՕ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2024



Յուքը կարգավորող հանձնաժողովի անդամին ներկայացրեք անձնական վկայականը կամ Վրաստանի քաղաքացու անձնագիրը



Անցեք դրոշմման ստուգման ընթացակարգը



Գրանցողը ձեր տվյալները կստուգի էլեկտրոնային նույնականացման սարքով



Անցեք դրոշմման ընթացակարգը



Նույնականացումից հետո, սարքը կտպի կտրոն, որի ստորագրմամբ դուք հաստատում եք ընտրություններին մասնակցությունը. կտրոնը մնում է գրանցողի մոտ



Ձեզ կփոխանցվի քվեաթերթիկը եւ հատուկ շրջանակ-ծրարը



Գաղտնի քվեարկության խցիկում հատուկ մարկերով քվեաթերթիկում ներկեք/նշեք ձեր ցանկալի միայն մեկ ընտրական սուբյեկտի դիմացի առկա շրջանակը



Ձեր ընտրության գաղտնիությունն ապահովելու համար շրջեք քվեաթերթիկը, տեղավորեք շրջանակ-ծրարում



Հատուկ շրջանակ-ծրարի կիրառմամբ քվեաթերթիկը տեղադրեք քվեների հաշվառման սարքում

## ՁԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Ձայների հաշվառման սարքն ավտոմատ կերպով հաշվառում է ձայները եւ, քվեարկության ավարտից հետո, պարտադիր ընթացակարգերի անցկացման պես տպում է ընտրությունների նախնական արդյունքների վերաբերյալ քաղվածքը

**ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ ԲԱՑԱՌԻԿ Է ԵՎ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ**

### ՔՈ ՁԱՅՆԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ Է

- Էլեկտրոնային սարքերը համացանցի հետ կապված չեն
- Էլեկտրոնային սարքերի աշխատանքին կիբերմիջամտության սպառնալիք գոյություն չունի

### ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դյուրացված ընթացակարգեր
- Նվազեցված հերթեր. կարելի է մոտենալ ցանկացած ազատ գրանցողին
- Ընտրողների մասնակցության ստույգ հաստատում
- Նախնական արդյունքների հրապարակման նվազեցված ժամանակ
- Արդյունքների ճշտություն ու վստահություն
- Մարդկային գործոնով պայմանավորված սխալների նվազագույնի հասցնում

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՂՏՆԻ Է**

**ԽՑԻԿՈՒՄ ՖՈՏՈ/ՎԻԴԵՈ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆ ԱՐԳԵԼՎԱԾ Է**

### ԸՆՏՐԱՏԵՂԱՄԱՍԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԵՆ

**Թույլ տեսողությամբ անձանց համար** խոշորացույցեր

**Կույրերի համար**՝ քվեաթերթիկի լրացման շրջանակային ձեւաչափ

**Խուլերի համար**՝ ժեստերի լեզվով եւ կույրերի համար՝ աուդիոձեւաչափով քվեարկությանը մասնակցությունը նկարագրող պաստառ

**Սայլակից օգտվող անձանց համար**՝ համապատասխանեցված մատչելի ընտրական տեղամասում քվեարկության խցիկ

**! ՀԻՇԵՑԵ՛Ք**

**ԸՆՏՐԱԿԱՆ ՔՎԵԱԹԵՐԹԻԿԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է, ԵՎ ԱՅՆ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ Է**

ԿԸՀ կոնտակտ-հա[illegible]ը +995 32 251-00-51 CESKO GE

ՀԱՐՑԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ՝ ԿԱՊՎԵՔ ՄԵԶ ՀԵՏ

# ՀԱՅԱՍՏԱՆ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՎՐԱՍՏԱՆԸ «ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԽԱՉՄԵՐՈՒԿ» ՆԱԽԱԳԾԻՆ ԱՋԱԿՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻՑ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Խոսելով Ռուսաստանի դիրքորոշման վերաբերյալ իր տպավորություններից՝ Հայաստանի վարչապետն ասաց.

- Տարանցիկ ուղիներն ունեն շատ էական ե'ւ տնտեսական, ե'ւ քաղաքական, այդ թվում՝ նաեւ արտաքին քաղաքական նշանակություն: Ռուսաստանի Դաշնությունը կարող է ունենալ մտահոգություն: Այդ ամբողջ հուքերի՝ այս տարածքով անցնելը նրա համար կարող է լինել ընդունելի, եթե ինքը շարունակի որոշակի ազդեցություն ունենալ այդ հոսքերի կառավարման վրա: Թե ինչ չափի ազդեցություն՝ էական չէ:

Անդրադառնալով «Խաղաղության խաչմերուկ»-ի վերաբերյալ արեւմտյան որոշ երկրների մոտեցումներին՝ Փաշինյանն ասաց, որ արեւմտյան գործընկերները չեն ուզում, որ հոսքերը հիմնականում հոսեն Իրանի տարածքով հարաբերությունների մի շարք հանգամանքների պատճառով:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ



*Հոկտեմբերի 16-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանն ընդունեց Հայաստանում հավատարմագրված Եվրոպական միության անդամ պետությունների արտակարգ եւ լիազոր դեսպաններին՝ ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսի գլխավորությամբ:*

Հանդիպմանը վարչապետը կարեւորեց Հայաստան-ԵՄ բազմոլորտ համագործակցությունը եւ մեկ անգամ եւս ընդգծեց Հայաստանի կառավարության պատրաստակամությունը՝ խորացնել եւ ընդլայնել բազմոլորտ հարաբերությունները եվրոպական գործընկերների հետ:

Իր հերթին, Վասիլիս Մարագոսն ընդգծեց ԵՄ շարունակական աջակցությունը՝ Հայաստանում ժողովրդավարական եւ տնտեսական ոլորտում բարեփոխումների առաջմղման գործում, այդ թվում՝ մասնավոր հատվածի կարողությունների զարգացման նպատակով:

Հաջորդիվ անդրադարձ է կատարվել Հայաստան-Ադրբեջան խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումներին:

Մտքեր փոխանակվեցին տարածաշրջանային հաղորդակցության ուղիների ապաշրջափակման հնարավորությունների շուրջ:

Հանդիպմանն անդրադարձան նաեւ տարածաշրջանային նշանակության այլ հարցերի:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ՂԱԶԱԽՍՏԱՆ

*Հոկտեմբերի 14-15-ը Հայաստանի նախագահ Վահագն Խաչատուրյանը պաշտոնական այցով գտնվում էր Ղազախստանում:*



Այցի շրջանակներում, Հայաստանի նախագահը հանդիպում ունեցավ Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւի հետ, Աստանայում ներկա գտնվեց Ղազախստանում Հայաստանի մշակույթի օրերի միջոցառումների մեկնարկն ազդարարող բացման հանդիսավոր համերգին՝ նվիրված Շառլ Ազնավուրի 100-ամյակին:

Հայաստանի եւ Ղազախստանի նախագահները բանակցությունների ընթացքում քննարկեցին առեւտրատնտեսական հարաբերությունների, տրանսպորտային եւ լոգիստիկ, գյուղատնտեսության, ֆինանսական, մշակութային եւ հումանիտար, ինչպես նաեւ թվայնացման ոլորտներում համագործակցության ամրապնդման հեռանկարները:

## «ԷՐԵԲՈՒՆԻ-ԵՐԵՎԱՆ - 2806» ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ «TriFest» ՍՊՈՐՏԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՎ

*Հոկտեմբերի 13-ին «Էրեբունի-Երեւան - 2806» տոնական միջոցառումների մեկնարկը տրվեց Հրազդանի կիրճում կազմակերպված «TriFest» սպորտային փառատոնով:*

Փառատոնը ներառում էր մանկական վազք, մեծահասակների վազք, հեծանվով անջատ մեկնարկ (Time Trial) եւ դուատլոն՝ ապահովելով ակտիվ ժամանց ու մասնակցության հնարավորություն բոլորին:

Փառատոնի շրջանակում քաղաքապետ Տիգրան Ավինյանին ներկայացվեց նաեւ Հրազդանի կիրճում դիտարկվող սպորտային անկյան նախագիծը:

Հայաստանի մայրաքաղաքի 2806-ամյակի տոնակատարության միջոցառումների շրջանակներում, Երեւանի Սախարովի հրապարակում անցկացվեցին սպորտային միջոցառումներ, Շառլ Ազնավուրի հրապարակում՝ էստրադային համերգ, Հյուսիսային պողոտայում՝ Գինու փառատոն, Կասկադում՝ ջազային, իսկ Դիանա Աբգարի այգում՝ ռոք համերգներ, ինչպես նաեւ Գարեջրի փառատոն:

Երեւանի 2806-րդ տարեդարձի առիթով եւ մայրաքաղաքի արվեստի զարգացման գործում նշանակալի ավանդի համար, Երեւանի Ավագանու որոշմամբ, ռեժիսոր Արմեն Խանդիկյանին, օպերային երգիչ, Հայաստանի ժողովրդական արտիստ Բարսեղ Թումանյանին, քանդակագործ, Հայաստանի ժողովրդական նկարիչ Լեւոն Թոքմաջյանին շնորհվեց Երեւանի պատվավոր քաղաքացու կոչում:

## «ՍՓՅՈՒՌՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԴԵՍՊԱՆ» ԾՐԱԳԻՐՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ Է ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

*«Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագրի շրջանակում, 18 երկրի 28 հայ պատվիրակ Հայաստանում մասնակցել են տասնիհնգօրյա դասընթացի, որն ընդգրկել է սեպտեմբերի 22-ից հոկտեմբերի 7-ը: Դասընթացներից հետո, յուրաքանչյուր մասնակից իր անհատական ծրագրով նախատեսված աշխատանքներ կիրականացնի իր համայնքում:*

*«Սփյուռքի երիտասարդ դեսպան» ծրագիրը նախաձեռնել է Հայաստանի Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը, որին մասնակցում են ինչպես իրենց համայնքում ակտիվ, այնպես էլ՝ իրենց գործունեությունը նոր սկսած 20-35 տարեկան սփյուռքահայ երիտասարդներ:*

*Ծրագիրը մեկամյա է, ընդգրկում է 2024 թվականի սեպտեմբերից 2025 թվականի օգոստոսն ընկած ժամանակահատվածը եւ ընթանում է երկու փուլով:*

## ՌՈՒՍ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԻՆ ԿԿԱՆԳՆԵՆ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԸ

*2025 թվականի հունվարի 1-ից ռուս զինվորականների հետ միասին Հայաստանի սահմանային ծառայությունը կներգրավվի Հայաստան-Իրան եւ Հայաստան-Թուրքիա սահմանների պաշտպանությանը:*

*Հայաստանի վարչապետի մամլո ծառայության հայտարարությամբ, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հանդիպմանը պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ 2025 թվականի հունվարի 1-ից Հայաստանի ԱԱԾ սահմանապահ ուժերի ներկայացուցիչները կմասնակցեն Հայաստանի եւ Իրանի, ինչպես նաեւ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ պետական սահմանի պաշտպանությունը:*

*Նույն հայտարարության մեջ նշվում է, որ Հայաստանի կառավարության ղեկավարի եւ Ռուսաստանի նախագահի հանդիպմանը քննարկվել է հարցերի լայն շրջանակ, ձեռք են բերվել կոնկրետ պայմանավորվածություններ՝ կապված էներգետիկ, կրթական եւ հումանիտար ոլորտների հետ:*

## 10 ՆՈՐ ՏՐՈԼԵՅԲՈՒՍ ԵՎ 20 ՆՈՐ ԱՎՏՈԲՈՒՍ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*10 նոր տրոլեյբուսները եւ 8,6 մետրանոց 20 նոր ավտոբուսներն արդեն Երեւանում են:*

*Երեւանի քաղաքապետի մամլո քարտուղար Հայկ Կոստանյանի հաղորդմամբ, Երեւանի քաղաքապետարանը ձեռք է բերել 8,6 մետրանոց 171 նոր ավտոբուս եւ 15 նոր տրոլեյբուս, որոնք աշնան ընթացքում կլինեն Երեւանում:*

**ՆՎԵՐ**

## ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆՆ ԱՆԴՐԵՅ ՇՈՒԳԱՐՈՎԻ ԿԵՐՏԱԾ ԴԻՄԱՆԿԱՐԻՑ «ԿՈՂՋՈՒՆԻ» ԿԵՆՏՐՈՆԻ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻՆ

*Վիրահայոց թեմի «Հովհ. Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի աշխատակիցների համար անակնկալ չէր ճանաչված գեղանկարիչ, ծնունդով թբիլիսցի Անդրեյ Շուգարովի այցը Թբիլիսի, քանզի «Վրաստան» թերթից արդեն տեղեկացել էինք, որ նկարիչն անակնկալ պետք է մատուցի ժողովրդական մեծ բանաստեղծի թբիլիսյան տանն ու թբիլիսահայերին:*



Հիրավի, 2024 թվականի հոկտեմբերի 12-ին, Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանի առաջնորդությամբ, Վիրահայոց թեմի «Հովհ. Թումանյանի տուն» կենտրոն այցելեց Երեւանից ժամանած արվեստասերների խումբը, որի կազմում էին գեղանկարիչ Անդրեյ Շուգարովը, նրա մտերիմ ընկեր, ծնունդով նույնպես թբիլիսցի, «ԿարԼենՏե» նկարչական Արտգալերեայի հիմնադիր Կառլեն Կարապետյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը եւ ուրիշներ:

Շրջայց կատարելով Հովհաննես Թումանյանի թբիլիսյան նախկին բնակարանում՝ Անդրեյ Շուգարովը կենտրոնին նվիրեց Հովհաննես Թումանյանի դիմանկարով իր կտավը՝ հավելելով, որ ժողովրդական մեծ բանաստեղծը այսուհետ այս կենտրոնի այցելուներին «կողջունի» այդ դիմանկարից:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս եպիսկոպոս Դավթյանն անվանի գեղանկարիչին ու դիմանկարի մեծ վարպետին պարգեւատրեց «Հովհաննես Թումանյան» հուշամեդալով:

Անդրեյ Շուգարովը շնորհակալական իր խոսքում արժեւորեց Կարեն Կարապետյանի նախաձեռնությունը Թումանյանի դիմանկարով կենտրոնը է'լ ավելի գեղեցկացնելու համար եւ խոստացավ իր անհատական ցուցահանդեսով անպայման ներկայանալ թբիլիսահայերին:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

# ՆՈՐԱՑՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԲԱՑՎԵՑ ՌՈՒՍԹԱՎԵԼՈՒ ՊՈՂՈՏԱՆ ՄԹԱԾՄԻՆԴԱՅԻ ԶԲՈՍԱՅԳՈՒՆ ԿԱՊՈՂ ՃՈՊԱՆՈՒՂԻՆ




*Հոկտեմբերի 18-ին, Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեի, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեի մասնակցությամբ, անցկացվեց մայրաքաղաքի Ռուսթավելի պողոտանյում՝ Ռուսթավելու մետրոյի մոտակայքում, Վրաստանի Գիտությունների ակադեմիայի շենքի հետնամասում գտնվող ստորին կայանը Մթածմինդայի զբոսայգու վերին կայանի հետ կապող նորացված-վերանորոգված ճոպանուղու բացման հանդիսավոր արարողությունը:*

Թբիլիսիի քաղաքապետարանի տեղեկատվությամբ, շրջանցիկ, մեկ ճոպանով, գոնդոլային (ուղեւորախցիկ) ճոպանուղին ինժեներական կառույց է, որը ներառում է ստորին եւ վերին կայանները ու կայարանների միջեւ ընկած հինգ հենակետերը:

Կայարանների միջեւ ձգվել է 47 մմ տրամագծով պարանի երկու թել, որոնց միջով խցիկները շարժվում են 5 մ/վ արագությամբ: Ուղեւորներին կսպասարկեն 21 միավոր 8 տեղանոց խցիկներ եւ ճանապարհը կանցնեն 5 րոպեում: Ճոպանուղին մեկ ուղղությամբ ժամում կարող է տեղափոխել 1200 ուղեւոր:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմել է 50 մլն լարի: Ճոպանուղու կառուցման եւ վերականգնման աշխատանքների շրջանակներում, ճոպանուղու ստորին կայարանի մոտ կազմակերպվել է 1300 քառ.մ հրապարակ: Նշված աշխատանքների արժեքը կազմել է 700 000 լարի:

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

## ՆԻԿԻՏԱ ՍԻՄՈՆՅԱՆԸ 98 ՏԱՐԵԿԱՆ Է



Խորհրդային լեգենդար ֆուտբոլիստ, սպորտի վաստակավոր վարպետ, լեգենդար «Արարատի» լեգենդար մարզիչ Նիկիտա Սիմոնյանը նշեց ծննդյան 98-ամյակը:

Տարեդարձի առիթով «Վրաստանը» կապվեց հոբելյարի հետ եւ նրան փոխանցեց թերթի աշխատակիցների ու ընթերցողների շնորհավորանքը:

Շնորհակալություն հայտնելով շնորհավորանքի համար՝ Նիկիտա Պավլովիչը գոհունակությամբ նշեց իր բազմամյա բարեկամական հարաբերությունները պարբերականի աշխատակիցների, մասնավորապես՝ գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանի հետ:

ՖՈՒՏԲՈԼ

# ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ. ԽԱՂԻ ՈՐԱԿԸ ՀԵՌՈՒ ԷՐ ԲԱՎԱՐԱՐ ԼԻՆԵԼՈՒՑ

*Անցնող շաբաթ Վրաստանի եւ Հայաստանի հավաքականները ֆուտբոլի Ազգերի լիգայի մրցաշարում անցկացրին երկուական հանդիպում:*

Լիգայի «B» դիվիզիոնում հանդես եկող Վրաստանի հավաքականը, մեկնարկային երկու հաղթական խաղերից հետո, որոշակի ետընթաց ապրեց եւ վերջին երկու հանդիպումներում, հոկտեմբերի 11-ին լեհական Պոզնան քաղաքում 0:1 հաշվով պարտություն կրեց Ուկրաինայի հավաքականից, իսկ երեք օր անց՝ հոկտեմբերի 14-ին, սեփական հարկի տակ նվազագույն հաշվով 0:1 զիջեց Ալբանիայի հավաքականին:

Նշենք, որ ՈւԵՖԱ-ն տուգանել է Ալբանիայի ֆուտբոլի ֆեդերացիային՝ Վրաստանի հավաքականի հետ խաղի ժամանակ երկրպագուների պահվածքի համար: Տիրանայում, Վրաստանի հավաքականի հետ հանդիպման ժամանակ, ալբանացի երկրպագուները փակել են վրացի երկրպագուների համար նախատեսված տրիբունաների աստիճանները, ինչի համար տուգանվել են 18 հազար եվրոյով:

Ալբանիայի ֆուտբոլի ֆեդերացիան վրացական կողմին 4 750 եվրո կվճարի տրիբունաներից առարկաներ նետելու, իսկ 12 հազար 500 եվրո՝ վրացական օրհներգը հնչելու ժամանակ սուլելու համար:

Ներկա դրությամբ, «B» դիվիզիոնում 7 միավորով առաջատարը Չեխիայի հավաքականն է, Վրաստանի թիմը 6 միավորով երկրորդն է:

Ազգերի լիգայի մրցաշարում Վրաստանի հավաքականը նոյեմբերի 16-ին կընդունի Ուկրաինայի թիմին, ապա նոյեմբերի 19-ին Ազգերի լիգայի մրցաշարը կավարտի մրցակցի դաշտում, Չեխիայի հավաքականի հետ մրցամարտով:

Ինչ վերաբերում է Ազգերի լիգայի «C4» ենթախմբում հանդես եկող Հայաստանի հավաքականին, հոկտեմբերի 13-ին սեփական հարկի տակ 0:2 հաշվով զիջեց Հյուսիսային Մակեդոնիայի հավաքականին եւ ներկայումս 4 միավորով Լատվիայի հավաքականի հետ կիսում է երկրորդ-երրորդ տեղերը: Նշենք, որ Ազգերի լիգայի մրցաշարում Հայաստանի հավաքականի անշուք խաղը դարձավ թիմի գլխավոր մարզիչ Ալեքսանդր Պետրակովի հրաժարականի պատճառը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային ընտրանին մրցաշարի նախավերջին հանդիպումը կանցկացնի սեփական հարկի տակ նոյեմբերի 14-ին՝ Ֆարերյան կղզիների հավաքականի հետ, իսկ մրցաշարի եզրափակիչ հանդիպումը՝ մրցակցի դաշտում նոյեմբերի 17-ին, Լատվիայի հավաքականի հետ մրցամարտում:

*ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ*

Ասպինձայի մունիցիպալիտետի Դամալա գյուղի հանրային դպրոցի մանկավարժական կոլեկտիվը խորին ցավակցություն է հայտնում Դամալայի հանրային դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Նինա Սիրականյանին, սիրելի տատիկի՝
*Նինա ԴՈՒՐԳԱՐՅԱՆ-ՍԻՐԱԿԱՆՅԱՆԻ*
մահվան կապակցությամբ: Վշտակցում է հարազատներին եւ մերձավորներին: Հավերժ լույս եւ խաղաղություն...



## Խ Ա Չ Բ Ա Ռ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Գեղեցիկ, սպիտակ, դաշտի ծաղիկ: 4.Առասպել «... եւ Բել»: 7.«... ու արծիվ եկան վերից, Սեւ աչքերը հանեցին» (Հովհ. Թումանյան «Թմկաբերդի առումը»): 9.Գետ Վրաստանում: 10.Քնի մեջ տեսածը: 11.Ձայրույթ, բարկություն, կատաղություն: 12.Հերոս «Վարդանանք» վեպում՝ ... Մոկաց: 13.«Որ ... զարկի, ջարդի հազար» («Քաջ Նազար»): 15.Վրացական ֆիլմ «Օթարի ...»: 16.«Ես վեր ... ոգի առած» (Ավ.Իսահակյան): 18.Կավից պատրաստված հեղուկի աման: 19.Խելացի, ուշիմ: 20.Միանիշ թիվ: 21.Ցուցական դերանուն: 22.Եվրոպայի դրամական միավորը: 25.Ստորադասական շաղկապ: 27.Միջոց, հնար: 28.Կրակ, բոց: 29.Խոսքի մաս: 31.«Քելե, լաո, քելե ... մըր էրգիր» («Քելե, լաո» երգից): 33.Ոչխարի, անասունի բուրդ: 35.Անգլիացի գրող, արկածային գրքերի հեղինակ ... Ռիդ: 37.Անառակ, անբարոյական: 38.Շառլ Ազնավուրի երգացանկից: 35.Պարսիկ շահ: 42.Ճաշատեսակ՝ պատրաստված տարբեր բանջարեղեններից: 43.ԱՄՆ-ի նախկին նախագահներից: 47.Սողունի տեսակ: 49.Աշխարհի ամենաերկար գետը: 50.Վրաստանում ապրող ժողովուրդ: 51.«Եղծ աղանդոց» գրքի հեղինակը (անունը): 54.Մաշտոցյան այբուբենի զինվոր: 55.Ռուս մեծ գրող Պուշկինի դայակը:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Մ.Մաշտոցի ծննդավայր գյուղը: 2.Վրաց կինոյի եւ թատրոնի դերասանուհի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ ... Թաղաիշվիլի:3.Խորհրդային եւ վրաց ջազ երգչուհի ... Սոխաձե: 4.Հեքիաթային հերոսուհի ...-փերի: 5.Տնամերձ հողամաս: 7.Երկրագնդի ոչ ջրային մասը: 8.Քարտի տեսակ: 14.Հայ ժողովրդական երգիչ ... Մնացականյան: 17.Ձկան տեսակ: 20.Այվազովսկու կտավներից «... ալիք»: 23.Դեպքին ներկա գտնվող: 24.Հայկական ժողովրդական երգ «... ցանկացա»: 26.Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում թաղված Մեծն վիպասանը: 29.Գորիսում ծնված արձակագիր, գրականագետ, կինոսցենարիստ, թարգմանիչ: 30.«Արգո» նավի տերը: 32.Վրաց մեծ թագուհի: 34.Վրաց հայտնի դերասանուհի: 36.Չափածո ստեղծագործության երկվանկ ոտք: 37.Արաբական պետություն: 40.Գովազդային գործակալություն Թբիլիսիում: 41.Վրաստանի հայ նկարիչների միության նախագահ ... Օհանջանովա: 44.Հայկական ֆիլմ: 46.Գետ Սիբիրում: 48.Ռուսական արքա, թագավոր: 52.Մաշտոցյան այբուբենի 6-րդ զինվորը: 53.Գոյություն ունի:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Անլեգալ: 9.Ժյուրի: 10.Վաչե: 11.Լիբերեց: 13.Ղալիմ: 16.Թուզ: 17.Տող: 19.Լուսան: 22.Սեդան: 24.Բիրեմա: 25.Շելֆ: 27.Անտոնա: 29.Լուսակա: 32.Եռամարտ: 33.Դանիել: 35.Սարք: 37.Ղեկ: 39.Ստնտու: 40.Աքոս: 43.Գեն: 44.Ռիսկ: 47.Ավե: 49.Մոթել: 50.Տեղը: 53.Սինի: 54.Իպր: 55.Իսկի: 57.Չեշ: 58.Ագատիչ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Կնճիթ: 2.Թերեզ: 3.Հավետ: 4.Ուժեղ: 5.Ռուալ: 6.Ֆիլմ: 8.Լացող: 12.Բուրդ: 14.Անուր: 15.Իմամ: 18.Անեմ: 19.Լիբում: 20.Սեմարանգ: 21.Նանա: 23.Աշոտիկ: 26.Լսել: 28.Նվաղ: 29.Լառ: 30.Սաստ: 31.Կտրտել: 34.Նելսոն: 36.Քուն: 38.Կով: 41.Թալիշ: 42.Սետրա: 45.Իմիջ: 46.Կթիչ: 48.Եղիա: 51.Ըստ: 52.Ճիչ: 56.Կի:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ჩვენი მისამართი: თბილისი 0105, გ.ათონელის ქუჩა 5,
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ტელ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ვრასტანი»
თბილისი, საქართველო
“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445